Հասցեատեր՝

«Շիրակ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ rouben.hakobyan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-051
Խախտում՝	1. «Շիրակ» թիմի երկրպագուի խաղադաշտ ներխուժելը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ) 2. Թիմի ֆուտբոլիստ Նարեկ Խաչատրյանի կողմից (28196) մրցակցին հարվածելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	Հայաստանի Առաջին խմբի առաջնություն 2023-2024
Խաղ՝	«Շիրակ-2» - «ԲԿՄԱ-2» (1:0), 23.09.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Շիրակ» թիմի երկրպագուի՝ խաղադաշտ ներխուժման համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։
2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Խաչատրյանի կողմից (28196) մրցակցին հարվածելու համար վերջինիս որակազրկել (2) երկու խաղով և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի մեկհարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։

Որակազրկումը տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 23-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։